

## ԼԻՍԱԲՈՆԻ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ

### ԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դատական խորհուրդների եվրոպական միավորման անդամները, 2018թ. մայիսի 30-ից հունիսի 1-ը հավաքվելով Լիսաբոնում, սույնով ՀՈՉԱԿՈՒՄ ԵՆ, որ.

1. Դատական խորհուրդների եվրոպական միավորումը (այսուհետ՝ ԴԽԵՄ) և իր անդամ պետությունները (այսուհետ՝ Անդամներ) նպատակադրված են բարելավել արդարադատական համակարգերն ամբողջ Եվրոպայում՝ ի շահ քաղաքացիների: Այն դատական համակարգը, որը դիմադրում է փոփոխությանն ու ընկալվում է որպես հետադիմական, ի վերջո, կկորցնի իր ժողովրդի վստահությունը և կդառնա խոցելի արտաքին հարձակումների համար, մասնավորապես՝ իշխանության այլ ճյուղերի և մեդիայի կողմից:
2. Դատական խորհուրդները պետք է նախաձեռնեն և առաջնորդեն դրական փոփոխության գործընթացը՝ անկախ, հաշվետու և բարձրորակ դատական համակարգի կայացմանը նպաստելու տեսլականով՝ այդպիսով հնարավորություն ընձեռելով դատական համակարգին՝ օպտիմալացնելու ողջամիտ ժամկետում անաչառ և արդյունավետ արդարադատության իրականացումը՝ ի նպաստ բոլորի: Կա դրա երկու տեսանկյուն. **առաջինը ներքինն** է՝ շահառուների ներգրավվածության առումով, և **երկրորդը՝ արտաքինը**, դատական իշխանության հարաբերությունը պետական իշխանության մյուս ճյուղերի հետ և դատական իշխանության դերի ամրապնդումը պետության ներսում:
3. Առաջին տեսանկյունից՝ ցանկացած փոփոխության հաջողության բանալին այդ փոփոխության ընթացքին բոլոր շահառուների ներգրավվածությունն ապահովելն է, և այս առումով Խորհուրդները պետք է խրախուսեն շահառուներին (մասնավորապես՝ դատավորներին) ոչ միայն ընդունել, այլև դրականորեն վերաբերվել փոփոխություններին՝ մոտիվացնելով նրանց լավագույնս աջակցելու փոփոխությանը: Այսպիսով.
  - Խորհուրդները պետք է հասկանալի դարձնեն շահառուներին այս կամ այն գործընթացի փոփոխության պատճառը կամ այն, թե ինչպես այդ փոփոխությունը կօգնի նրանց: Այս մոտեցումը կբարձրացնի շահառուների կողմից փոփոխությանն աջակցելու հավանականությունը:
  - Խորհուրդները պետք է քաջալերեն բոլոր դատավորներին՝ մասնակցելու շարունակական կրթությանը և իրենց աշխատանքի մշտապես զարգացում ապրող ձևերի բարելավումների մասը կազմելու:
  - Դատավորներին նշանակումների համար ընտրելիս ուշադրություն պետք է դարձվի թեկնածուների՝ փոփոխություններ ընդունելու և ժամանակակից մոտեցում որդեգրելու պատրաստակամությանը:
  - Խորհուրդները պետք է հանդիսանան կամուրջ դատավորների և գործադիր իշխանության միջև՝ առաջարկված բարեփոխումների առնչությամբ՝ այդպիսով ապահովելով, որպեսզի դատավորների տեսակետները հայտնի դառնան, իսկ

բարեփոխումները չիրականացվեն՝ առանց բավարար չափով հաշվի առնելու դրանց ազդեցությունը դատավորների վրա:

- Խորհուրդները պետք է նաև ակտիվորեն քաջալերեն դատավորներին, որպեսզի վերջիններս կիսվեն իրենց տեսակետներով այն մասին, որ բարեփոխումներն իմաստալից են: Միաժամանակ դրանք գործադիրին փոխանցելու միջոցով՝ ընդգծել դատական համակարգի կողմից անհրաժեշտ փոփոխությունները ընդունված լինելու կարևորության դրական իմաստը:
4. Երկրորդ տեսանկյունից՝ ԴԽԵՄ-ը կրկնում է, որ իբրև փոխադարձ ճանաչման հիմք՝ ԵՄ-ի դատական իշխանությունների միջև փոխվստահությունը պահպանելու և ամրապնդելու հիմնարար պահանջ է դատական համակարգերից յուրաքանչյուրի անկախությունը, որակը և արդյունավետությունը, ինչպես նաև յուրաքանչյուր պետության մեջ իրավունքի գերակայության նկատմամբ դրսևորված հարգանքը: Մասնավորապես.
- Խորհուրդները պետք է ստանձնեն նոր դեր թե՛ իրենց երկրների և թե՛ ավելի լայն շրջանակների առումով՝ արտահայտելով և բացատրելով անկախ և հաշվետու դատական իշխանության դերը իրավունքի գերակայությամբ կառավարվող պետության մեջ, ինչպես նաև իրավունքի գերակայությունը դատական իշխանության դիրքերի ամրապնդման և իշխանության ճյուղերի ավելի լավ հավասարակշռմանը հասնելու համար: Իրավունքի գերակայությունը համընդհանուր է. այն չի ավարտվում որևէ կոնկրետ երկրի սահմանին, այլ տրանսազգային է:
  - Խորհուրդները պետք է օգտակար լինեն՝ օգնելով հանրությանը լուսաբանել դատավորների գործառույթները՝ օգտվելով որոշ երկրներում առկա փորձից, որտեղ դատավորները, որպես անկախ դատական իշխանության և ցանկացած ժողովրդավարության մաս կազմելու կենսական նշանակության իմաստը բացատրելու ջանքի մաս, այցելում են դպրոցներ և գրուցում երեխաների հետ:
  - Սա պետք է լինի դատական իշխանությունն ավելի տեսանելի դարձնելու ավելի ընդհանրական ջանքերի բաղադրիչ՝ հանրությանը վերաբերելի և հասկանալի, և ԴԽԵՄ-ն էլ պետք է ծառայի որպես հարթակ, որի միջոցով դատավորների և դատական համակարգի դերի բնույթը հայտնի պետք է դառնա հավասարապես իրավաբաններին և ոչ իրավաբաններին:
5. ԴԽԵՄ-ը հետևում էր Լեհաստանի ազգային դատական խորհրդի բարեփոխմանը՝ ահագնացող տագնապով: ԴԽԵՄ-ի անդամ լինելու համար Կանոնադրությունը պահանջում է, որ Եվրոպայի միության անդամ պետության ազգային մարմինը պետք է լինի անկախ գործադիրից և օրենսդիրից, պետք է կրի արդարադատություն իրականացնելիս դատավորների և դատարանների անկախության աջակցման վերջնական պատասխանատվությունը: ԴԽԵՄ-ը հստակ նշում է, որ Լեհաստանի դատական խորհրդի (ԼԴՀ) ներկայացուցիչների ներկայությունը Վեհաժողովին չի նշանակում, որ ԴԽԵՄ-ն ընդունում է վերջինիս Անդամի կարգավիճակը. այն մեր միավորմանը կպահպանվի այն բանից հետո, երբ գործադիր խորհուրդը կավարտի իր ուսումնասիրությունը ԼԴՀ-ի դրության վերաբերյալ: Այս ուսումնասիրությանը մաս կկազմի ԼԴՀ-ի հետ երկխոսությունը: Գործադիր Խորհուրդն ակնկալում է, որ ուսումնասիրությունը կավարտվի մի քանի ամսում: Դրա արդյունքները կբաժանվեն

Անդամներին՝ ԼԴՀ-ի անդամությունը շարունակելու խնդրի վերաբերյալ ԴԽԵՄ-ի առաջարկի հետ միասին:

6. Իրավիճակը Թուրքիայում նույնպես շատ մտահոգիչ է: 2016թ. դեկտեմբերին Եվրոպական չափանիշերը և ԴԽԵՄ-ի Կանոնադրությունը չպահպանելու համար, ԴԽԵՄ-ը կասեցրեց Թուրքիայի Բարձր դատական և Դատախազական խորհրդի դիտորդ-անդամությունը: ԴԽԵՄ-ը բոլորովին վերջերս մեծ ավստասանքով տեղեկացավ, որ Բարձր դատական և Դատախազական Խորհրդի նախկին անդամներից մեկը մահացել է անազատության մեջ: ԴԽԵՄ-ը ցանկանում է մեկ անգամ ևս ընդգծել իր համերաշխությունը Թուրքիայի պաշտոնազրկված դատավորներին և դատախազներին և կոչ է անում թուրքական համապատասխան իշխանություններին՝ ապահովելու արագ, բաց, արդար և անաչառ դատական գործընթաց ազատազրկված դատավորների և դատախազների առնչությամբ: Դատավորների և դատախազների դեմ ընթացող դատավարություններից ստացված առաջին հաղորդումները քիչ արժանահավատ են, որ արդարադատությունը հանդիսանում է արժեք:

ԱՅՍՊԻՍՈՎ,

ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

Դատական խորհուրդներին ողջ Եվրոպայում նախաձեռնել և առաջնորդել դրական փոփոխության գործընթաց անկախ, հաշվետու և բարձրորակ դատական իշխանություն և համակարգ խթանելու տեսլականով՝ (i) վերոհիշյալ ձևերով ներգրավելով շահառուներին և (ii) ամրապնդելով դատական իշխանության դերը պետական իշխանության մյուս ճյուղերի հանդեպ:

Ընդունված է Լիսաբոնում 2018թ. հունիսի 1-ին: